ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ

ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2011 թվականի N 1-Ն գ. Քեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՌԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեի հաստատման մասին » թիվ 35-Ն որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի համայնքի 2011 թվականի բյուջեի եռամսյակային համամասնությունները՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար՝ Թ. ՍԱՀԱԿՅԱՆ

25.01.2011թ.
գ.Քեթի

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Քեթիի համայնքի ղեկավարի 2011 թվականի
հունվարի 25-ի թիվ 1 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

h/h	**Եկամուտներ**	2011թ. պլան //հազար դրամ/	Iեռամսյակ	II եռամսյակ	IIIեռամսյակ	IVեռամսյակ
1	Հարկեր և տուրքեր՝որից	17183.3	3917.2	7797.2	12392.2	17183.3
2	Հողի հարկ	1213.1	220.0	360.0	850.0	1213.1
3	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	85.2	8.6	15.0	20.0	85.2
4	Գույքահարկ փոխադրամիջոցների	828.6	100.0	150.0	400.0	828.6
5	Տեղական տուրքեր	320.0	80.0	160.0	240.0	320.0
6	Վարձավճար	1141.9	100.0	295.0	676.4	1141.9
7	Պատվիրակված լիազորություններ	600.0	150.0	300.0	450.0	600.0
8	Դոտացիա	12954.5	3238.6	6477.2	9715.8	12954.5
9	Տեղական վճարներ	40.0	20.0	40.0	40.0	40.0

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

h/h	**Ծախսեր**	2011թ. պլան //հազար դրամ/	Iեռամսյակ	II եռամսյակ	IIIեռամսյակ	IVեռամսյակ
1	Ընդամենը ծախսեր՝որից	17851.2	4585.1	8465.2	13060.1	17851.2
2	Աշխատավարձ	8910.0	2230.0	4500.0	6800.0	9510.0
3	Պարգևատրումներ	600.0	-	-	-	600.0
4	Սոցիալական ապահովության վճարներ	1770.0	450.0	900.0	1400.0	1770.0
5	Բանկային ծառ. ծախսեր	20.0	20.0	20.0	20.0	20.0
6	Էներգետիկ ծառայություններ	350.0	135.0	195.5	245.0	350.0
7	Կոմունալ ծառայություններ	100.0	-	100.0	100.0	100.0
8	Կապի ծառայություններ	150.0	40.0	80.0	120.0	150.0
9	Ապահովագրական ծախսեր	50.0	-	-	-	50.0
10	Համակարգչային ծառայություններ	55.0	-	-	55.0	55.0
11	Մասնագիտական ծառայություններ	600.0	150.0	300.0	450.0	600.0
12	Տեղեկատվական ծառայություններ	40.0	40.0	40.0	40.0	40.0
13	Մեքենաների և սարք. նորոգում	150.0	30.0	60.0	90.0	150.0
14	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	300.0	-	-	300.0	300.0
15	Գրասենյակային նյութեր և հագուստ	150.0	50.0	70.0	100.0	150.0
16	Տրանսպորտային նյութեր	1000.0	140.0	430.0	770.0	1000.0
17	Հատուկ նպատակային այլ նյութեր	350.0	25.0	125.0	325.0	350.0
18	Սուբսիդիաներ	1133.0	-	170.0	670.0	1133.0
19	Այլ նպաստներ բյուջեից	400.0	100.0	200.0	300.0	400.0
20	Պահուստային միջոցներ	1055.3	507.2	607.2	607.2	1055.3
21	Շենքերի շինությունների կառուցում	2500.0	567.9	567.9	2500.0	2500.0
22	Վարչական սարքավորումներ	150.0	-	-	150.0	150.0
23	Աճեցվող ակտիվներ	100.0	100.0	100.0	100.0	100.0
24	Նախագծահետազոտական ծախսեր	317.9	-	-	317.9	317.9
25	Հողի իրացումից մուտքեր	-2400.0	-	-	-2400.0	-2400.0

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ

ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2011 թվականի N 2-Ն գ. Քեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի երկրորդ պարբերության և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ մասերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի համայնքի ղեկավարի 2011 թվականի հունվարի 25-ի «Բյուջեի եռամսյակային համամասնությունները հաստատելու մասին» N 1-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

համայնքային ենթակայության մանկապարտեզի նորոգման աշխատանքները իրականացնելու նպատակով համայնքի բյուջեի ծախսային մասի «Շենքերի և շինությունների նորոգում և պահպանում» 4251 հոդվածի «300.0 հազար » դրամը 3-րդ եռամսյակից տեղափոխել 2-րդ եռամսյակ:

Համայնքի ղեկավար՝ Թ. ՍԱՀԱԿՅԱՆ

20.05.2011թ.
գ.Քեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ

ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2011 թվականի N 3 գ. Քեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշման պահանջները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը համաձայն N 1 հավելվածի.
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի գյուղական համայնքի ղեկավարի 2010 թվականի մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» N 12 որոշման թիվ 1 հավելվածը:

Համայնքի ղեկավար՝ Թ. ՍԱՀԱԿՅԱՆ

25.05.2011թ.
գ.Քեթի

Հավելված N1
ՀՀ Շիրակի մարզի Քեթիի

գյուղական համայնքի ղեկավարի
2011 թ. մայիսի 25-ի N 3 որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

1.2-1
(ծածկագիրը)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քարտուղարի (այսուհետ՝ քարտուղար) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում:
2. Քարտուղարին «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի գյուղական համայնքի ղեկավարը (այսուհետ՝ համայնքի ղեկավար):

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Քարտուղարն անմիջականորեն ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին:
4. Քարտուղարին անմիջականորեն ենթակա և հաշվետու են աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների պետերը և աշխատակազմի ստորաբաժանումներում (բաժիններում) չներառված այլ պաշտոններ զբաղեցնող անձինք:
5. Քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի բաժինների պետերից մեկը՝ համայնքի ղեկավարի հայեցողությամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում քարտուղարին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

6. Քարտուղարը՝

ա) աշխատակազմում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը.

բ) կատարում է համայնքի ղեկավարի հանձնարարականները.

գ) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները, աշխատակազմի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Քարտուղարը՝

ա) լուծում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ.

բ) աշխատակազմի բաժինների պետերին և աշխատակազմի բաժիններում չընգրկված այլ պաշտոններ զբաղեցնող անձանց տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Քարտուղարը՝

ա) աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու անդամների, աշխատակազմում հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի համայնքային ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հետ.

բ) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է այլ մարմիններում կազմակերպված նիստերին (խորհրդակցություններին) .

գ) աշխատակազմից դուրս շփվում և պարբերաբար հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, Հայաստանի Հանրապետության այլ համայնքների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով և այլն:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Քարտուղարը՝

ա) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

բ) բացահայտում, վերլուծում և գնահատում է աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ.

գ) համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ՝ աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Քարտուղարը՝

ա/ ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ եւ համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ եւ քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան եւ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

2. Մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի անձնագիրն ընդգրկում է համայնքային ծառայության, պետական կառավարման ոլորտի կամ համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավար պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, առաջատար պաշտոնների անձնագրերը՝համայնքային ծառայության, պետական կամ համայնքային ծառայության ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

բ) ունի «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե) տիրապետում է օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի:

7. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Քարտուղարը՝

ա) ապահովում է աշխատակազմում համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.

բ) մասնակցում է աշխատակազմի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու նախապատրաստման աշխատանքներին.

գ) ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի մշակման աշխատանքների իրականացումը.

դ) համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների և այդ պաշտոնները զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը.

ե) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքների մասին մրցութային հանձնաժողովի եզրակացությունը, իսկ այդ արդյունքների գրավոր բողոքի առկայության դեպքում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան որոշումն ստանալուց հետո, աշխատանքային երեք օրվա ընթացքում, մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին (մասնակիցներից մեկին) նշանակում է տվյալ պաշտոնում.

զ) հաստատում է աշխատակազմի ատեստավորման (այդ թվում՝ արտահերթ) ենթակա համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ցուցակները.

է) համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի ատեստավորման (այդ թվում՝ արտահերթ) ենթակա համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի, ինչպես նաև առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ցուցակները.

ը) ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է իր անմիջական ենթակայության տակ գտնվող համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը.

թ) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում, ինչպես նաև ատեստավորման արդյունքների գրավոր բողոքի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան որոշման հիման վրա օրենքով սահմանված ժամկետում ընդունում է տվյալ համայնքային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին որոշում.

ժ) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատակազմի համայնքային ծառայողներին շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ և 3-րդ դասի առաջատար ծառայողի ու Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճաններ.

ժա) իր կողմից համայնքային ծառայության դասային աստիճան շնորհած աշխատակազմի համայնքային ծառայողին օրենքով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատելու հետ միաժամանակ իր վարչական ակտով զրկում է նաև տվյալ դասային աստիճանից.

ժբ) օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով և ժամկետներում արտամրցութային կարգով նշանակումներ է կատարում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններում.

ժգ) համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իր հայեցողությամբ որոշում է աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի ժամանակավոր թափուր պաշտոնները փոխարինող համայնքային ծառայողների կողմից զբաղեցնելու հարցը.

ժդ) օրենքով նախատեսված դեպքերում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների

խմբի ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձի, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կնքում է ժամկետային աշխատանքային պայմանագրեր.

ժե) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսված խրախուսանքներ և կարգապահական տույժեր.

ժզ) աշխատակազմի համայնքային ծառայողի 65 տարին լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն այդ համայնքային ծառայողի պաշտոն զբաղեցնելը մինչև մեկ տարի ժամկետով շարունակելու թույլտվության մասին.

ժէ) կազմակերպում է աշխատակազմում քննարկումների և խորհրդակցությունների անցկացման աշխատանքները.

ժը) համայնքի ղեկավարին է զեկուցում ամենօրյա փոստը և թղթակցությունները.

ժթ) համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում նրա որոշումները և կարգադրությունները.

ի) աշխատակազմում կազմակերպում է տեխնիկական սպասարկման աշխատանքները.

իա) ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության այլ համայնքների ղեկավարների աշխատակազմերի հետ.

իբ) համայնքի ղեկավարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին.

իգ) իրեն անմիջական ենթակա և հաշվետու համայնքային ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունների վերաբերյալ տալիս է համապատասխան եզրակացություններ.

իդ) ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.

իե) ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը.

իզ) կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստմանը.

իէ) ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.

իը) կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.

իթ) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրատարակումը.

իժ) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.

իի) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.

խ/ Օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար.

խա/ օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին.

խբ/ իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում համայնքի ղեկավարին անհապաղ ներկայացնում է առաջարկություն տարածքային զինվորական կոմիսարիատին այդ մասին գրավոր տեղեկատվություն տրամադրելու համար.

խգ/ իր իրավասության սահմաններում մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացումը:

խդ/ հանդիսանում է համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի անդամ /նախագահ/ և ունի խնամակալության և հոգաբարձության կանոնադրությամբ նախատեսված իրավունքներն ու պարտականությունները

լա) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

ծ) անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

Աշխատակազմի քարտուղարն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Աշխատակազմի քարտուղարին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ

ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2011 թվականի N 4 գ. Քեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 9-ի թիվ 11-Ն որոշումը և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետրական ընկերության «Էներգետիկ օբյեկտների կառուցման տնօրինություն » մասնաճյուղի տնօրենի 2011 թվականի մայիսի 13-ի N 01-12/45 գրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի վարչական տարածքի համայնքային սեփականություն հանդիսացող 137-001 ծածկագրի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից հավաքովի անգար-պահեստներով զբաղեցված 3232.27 քառակուսի մետր հողատարածքը 717.564 հազար դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքով օտարել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Էներգետիկ օբյեկտների կառուցման տնօրինություն» մասնաճյուղին շենքերի և շինությունների պահպանման և սպասարկման համար:

Համայնքի ղեկավար՝ Թ. ՍԱՀԱԿՅԱՆ

12.07.2011թ.
գ.Քեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ

ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2011 թվականի N 5 գ. Քեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի վարչական տարածքում Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Էներգետիկ օբյեկտների կառուցման տնօրինություն» մասնաճյուղին պատկանող 037-001-01 ծածկագրի հողամասը հասցեավորել գ. Քեթի, Արտադրական բազա թիվ 1:

Համայնքի ղեկավար՝ Թ. ՍԱՀԱԿՅԱՆ

28.07.2011թ.
գ.Քեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ

ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 օգոստոսի 2011 թվականի N 6 գ. Քեթի

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ, ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 29.12.1996թ. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և 29.03.2002թ. «Քաղաքացիական պաշտպանության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքներով, Քեթիի համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման, կազմակերպման և իրականացման նպատակով՝**որոշում եմ.**

1. Ստեղծել՝

1)Քաղաքացիական պաշտպանության շտաբ, շտաբի պետ նշանակել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Արշալույս Գրիգորյանին և շտաբը համալրել գյուղապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներով:

2) Համայնքի տարահանման հանձնաժողով, հանձնաժողովի նախագահ նշանակել համայնքի դպրոցի տնօրեն Ալիսա Նիկողոսյանին և հանձնաժողովը համալրել դպրոցի ուսուցչական կազմից:

3) Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝

ա. փրկարարական խումբ՝ 1/9 անձնակազմով, հրամանատար՝ Հովհաննես Սահակյան

բ. կապի խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Հրայր Ստեփանյան

գ. քիմիական, ճառագայթային դիտարկման կետ՝1/3 անձնակազմով, հրամանատար՝ Արթուր Մխիթարյան

դ. անհատական պաշտպանության միջոցների բաշխման խումբ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Կարինե Կարապետյան

ե. հասարակական կարգի պահպանման խուբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Սամվել Սարգսյան

զ. գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Անահիտ Պետրոսյան

2. Հանձնարարել՝

1) քաղաքացիական պաշտպանության շտաբի պետին՝

ա. քաղաքացիական պաշտպանության կազմավորումները համալրել անձնակազմով, գույքով և տեխնիկայով.

բ. կազմակերպել և իրականացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, կազմավորումների անձնակազմի և բնակչության ուսուցումը, համաձայն Հաաստանի Հանրապետության կառավարության 30.01.2003թ. թիվ 134-Ն որոշման.

գ. կազմել կյուրաքանչյուր տարի մինչև հունվարի 1-ը ճշտել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 22.04.2004թ. թիվ 633-Ն որոշման.

3. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելիության:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ:

5.Ուժը կորցրած ճանաչել Քեթիի համայնքի ղեկավարի 2010 թվականի մարտի 12-ի

N 6 կարգադրությունը:

Համայնքի ղեկավար՝ Թ. ՍԱՀԱԿՅԱՆ

02.08.2011թ.
գ.Քեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Քեթիի համայնք, Հեռ. (091) 34-30-62 (0312) 6-00-28

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2011 թվականի N 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 11.09.2006 թվականի «Համայնքային ծառայողի ատեստավորում անցկացնելու մասին» N 15 հրամանով հաստատված կարգի 3-րդ և 10-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Արշալույս Գրիգորյանի (ծածկագիր 1.2-1) ատեստավորումն անցկացնել 2011 թվականի նոյեմբերի 24-ին ժամը 15-00-ին գյուղապետարանում:
2. Օրենքով սահմանված կարգով իրազեկել համայնքային ծառայողին և ատեստավորման հանձնաժողովի անդամներին:
3.Ատեստավորման նախապատրաստական աշխատանքներն իրականացնել համայնքի ղեկավարի աշխատակազմի միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. ՍԱՀԱԿՅԱՆ

2011թ. հոկտեմբերի 21
գ.Քեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Քեթիի համայնք, Հեռ. (091) 34-30-62 , (0312) 6-00-28

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 դեկտեմբերի 2011 թվականի N 8

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2010 թվականի ապրիլի 27-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ 50-Ն օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման և 2010 թվականի հունիսի 3-ի N 816-Ն որոշումների դրույթներով, հիմք ընդունելով Սարիբեկ Բագրադի Մկրտչյանի դիմումը, Շիրակի մարզի Քեթիի համայնքի 3-րդ փողոց, 1-ին փակուղի, տուն 2 հասցեում գտնվող ծածկագիր 015-010, հատկացված 0.025533 հեկտար տնամերձ հողամասում կառուցված 45.79 քառակուսի մետր բնակելի տան համար չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնող փաստաթղթերը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Շիրակի մարզի Քեթիի համայնքի 3-րդ փողոց, 1-ին փակուղի, տուն 2 հասցեում գտնվող ծածկագիր 015-010, 0.025533 հեկտար տնամերձ հողամասը և 45.79 քառակուսի մետր բնակելի տունը կառուցված 1982 թվականին (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը) , համարել Սարիբեկ Բագրադի Մկրտչյանի (ծնված1945 թվականին) սեփականությունը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված տնամերձ հողամասը 0.025533 հեկտար չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտներ և չի հակասում քաղաքաշինական նորմերին:
3.Միջնորդել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ախուրյան տարածքային ստորաբաժանմանը կատարել պետական գրանցում առանց օրինականացման վճարներ կատարելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. ՍԱՀԱԿՅԱՆ

2011թ. դեկտեմբերի 9
գ.Քեթի